



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՉ ԸՆԴՈՒՆԵՑ ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՍԱՅԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՎԻ ԾՆՈՂՆԵՐԵՆ Ս. ԳՐՈՅ ԽՄԲԱԿԸ

Երեքաբթի, 20 Փետրուարի կեսօրին, Ազգային Առաջնորդարանին մեջ ստեղծուեցաւ հոգեւոր մթնոլորտով յիշատակելի պահ մը, երբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Փաստինայի Սահակ-Մեսրոպ Հայ Զրիստոնեական Վարժարանի ծնողներէն խումբ մը, գլխաւորութեամբ վարժարանի մանկապարտեզի վարիչ Տիկին Շիկին Ռիթա Դաւիթեանի: Խումբին անդամները մաս կը կազմեն վարժարանի յարկին տակ տեղի ունեցող Ս. Գրոյ սերտողութեան պահերուն հետեւողներուն: Առաջնորդ Սրբազնանի կողքին, հիւրընկալման ներկայ եղան Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերապ. S. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Ռոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

Առաջնորդ Սրբազնանը ողջունեց բարեպաշտ հայուիիները, որոնք բացատրեցին, թէ ամէն Երեքաբթի, իրենց զաւակները դպրոց առաջնորդելէ ետք, կը համախմբուին դպրոցի յարկին տակ, կ'ունենան հոգեւոր խորհրդածութեան պահեր, միասնաբար հոգեւոր երգեր կ'երգեն ու կը կատարեն Ս. Գրային սերտողութիւն, առաջնորդութեամբ Տիկին Ռիթա Դաւիթեանի:

Առաջնորդ Սրբազնանը բարձր գնահատեց այս խմբակին տարած աշխատանքը, ընդգծելով, որ իբրեւ հայուիիներ ու մեր Եկեղեցւոյ զաւակները, անոնք իրենց այս ընթացքով հաւատարմութիւն կը ցուցաբերեն մեր հաւատքի հայրեռուն ու անոնց ժառանգութիւններուն: Ան յորդորեց հիւր տիկինները, որպեսզի անշեղ կերպով շարունակեն իրենց այս նախաձեռնութիւնը, պահպանեն ճշմարիտ քրիստոնեայի իրենց ընթացքը, հեռու մնալով այն անհատական ու ոչ ուղղափառ մեկնաբանութիւններէն, որոնք կը տրուին Ս. Գրային սերտողութիւններու ընթացքին՝ այլուր: Ան շեշտեց, որ իբրեւ մայրեր ու մեծ մայրեր՝ հայ տիկինները պէտք է ըլլան իսկական առաջնորդներ նոր սերունդներուն համար, որովհետեւ հայ ընտանիքին հիմք, զաւակները քրիստոնեական ու ազգային ճշմարիտ ուղիին մեջ պահողները մեր մայրերն են, որոնք անցեալին ու ներկայիս յանձն առած են վսեմ առաքելութիւն մը:

Յիշ տիկինները յուշանուեր մը բերած էին Առաջնորդ Սրբազնին, որ իր կարգին անոնց նուիրեց Ազգ. Առաջնորդարանը խորհրդանշող յուշանուերներ:

Տիկինները այսուհետեւ ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքներուն, իսկ հրաժեշտելու առաջ, աղօթքի պահ մը ունեցան »Ս. Տրդատ Եւ Ս. Աշխեն« մատրան մեջ: Անոնք շնորհակալութիւն յայտնեցին Առաջնորդ Սրբազնին ու հոգեւոր հայրերուն, այս ընդունելութեան համար, ու մեկնեցան գեղեցիկ յիշատակներով:

PRELATE WELCOMES BIBLE STUDY GROUP FROM SAHAG MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL

On Tuesday, April 20th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed a group of parents from Sahag Mesrob Armenian Christian School, who are also members of the Bible study held at the school. The delegation was headed by the school's kindergarten director Mrs. Rita Tavitian. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian also participated in the meeting.

The guests informed the Prelate that they meet every Tuesday morning for spiritual meditation and Bible study.

The Prelate commended the group for the love and devotion they demonstrate towards our faith and to preserving the religious heritage of our forefathers. He encouraged them to continue their mission, stressing that it is Armenian mothers and grandmothers who establish the foundations of an Armenian family, directing our new generation to a life in accordance with our national and religious values.

The meeting concluded with an exchange of mementos.

The ladies were then given a tour of the building and participated in a prayer service at the "St. Dertad and St. Ashkhen" Chapel prior to their departure.